ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2– ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/57» ծածկագրով ընթացակարգի արդյունքում 02.10.2015թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/57-7 պայմանագիրը 16.12.15թ-ին մասնակի լուծելու մասին համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: *Մասնակցի դիմումը՝* հիմք ընդունելով ՀՀ կառավարության 11.02.2011թ. N168-Ն որոշման 36-րդ կետի 9-րդ ենթակետը 42000 կգ «կարտոֆիլ», 8 023 կգ «գազար», 2 020 կգ «բազուկ» ապրանքատեսակների մասով Պայմանագիրը երկկողմանի մասնակի լուծելու առաջարկով:

Փոփոխության նկարագրություն: N ՇՀԱՊՁԲ-7/57-7 *պայմանագիրը մասնակի լուծելու մասին.*

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 11.02.2011թ. N 168-Ն որոշման 36-րդ կետի 9-րդ ենթակետը, ինչպես նաև Պայմանագրի 9.7 կետը, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագիրը լուծել մասնակի՝ Երևանի տարածաշրջանից 42 000 կգ «կարտոֆիլ», Երևանի տարածաշրջանից 2020 կգ «բազուկ», Երևանի տարածաշրջանից 8023 կգ «գազար» ապրանքատեսակների մասով:

Սույն Համաձայնագրի 1 1 կետով նախատեսված լուծման արդյունքում Պայմանագրի գինը նվազում է 5 427 771 (հինգ միլիոն չորս հարյուր քսանյոթ հազար յոթ հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամով և կազմում է 66 140 459 (վաթսունվեց միլիոն հարյուր քառասուն հազար չորս հարյուր հիսունինը) ՀՀ դրամ:

Փոփոխության հիմնավորում՝ Չի հակասում ՀՀ կառավարության 10.02.11թ. 168-Ն որոշման 60-րդ կետին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա.Գրիգորյան:

Հեռախոս՝ *010-29-44-18*:

Էլ. փոստ՝ ***a.grigoryan@mil.am***:

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

N ՇՀԱՊՁԲ-7/57-7 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 16 .12.2015թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և Ա/Ձ Սերգե Սերգեյանը, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասը, 02.10.2015թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/57-7 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.7 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 11.02.2011թ. N 168-Ն որոշման 36-րդ կետի 9-րդ ենթակետը, ինչպես նաև Պայմանագրի 9.7 կետը, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագիրը լուծել մասնակի՝ Երևանի տարածաշրջանից 42 000 կգ «կարտոֆիլ», Երևանի տարածաշրջանից 2020 կգ «բազուկ», Երևանի տարածաշրջանից 8023 կգ «գազար» ապրանքատեսակների մասով:

1.2 Սույն Համաձայնագրի 1.1 կետով նախատեսված լուծման արդյունքում Պայմանագրի գինը նվազում է 5 427 771 (հինգ միլիոն չորս հարյուր քսանյոթ հազար յոթ հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամով և կազմում է 66 140 459 (վաթսունվեց միլիոն հարյուր քառասուն հազար չորս հարյուր հիսունինը) ՀՀ դրամ:

2.Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման /կնքման/ պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2.4 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գանձապետական վարչություն Հ/Հ 900011144079 ՀՎՀՀ 00867415 ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ- ՆՏԱ դեպարտամենտի պետ Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ	Ա/Ձ Սերգե Սերգեյան ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Արծվանիստ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ Հ/Հ 220199601166000 ՀՎՀՀ 72923787 Ս. ՍԵՐԳԵՅԱՆ